IDBank

2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

1 Բանկի մասին համառոտ

Բանկի կառավարման մարմինները 03
Բանկի առաքելությունը, տեսլականը, արժեքները 04
Բանկի տարածքային ներկայացվածությունը 05
Բանկը որպես հաշվետու թողարկող 06

2 Ֆինանսական հաշվետվություն

Ֆինանսական արդյունքների ամփոփում 08
Ֆինանսական հաշվետվություններ 12

3 Ռազմավարական հաշվետվություն

Ռազմավարական առաջնահերթություններ 17
Իրականացված ծրագրեր 18

4 Ռիսկերի կառավարում

Հիմնական տնտեսական նորմատիվներ 21
Ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումներ 22

Պատասխանատու անձանց հայտարարություն 26

1

Բանկի մասին համառոտ

Բանկի կառավարման մարմինները 03

Բանկի առաքելությունը, տեսլականը, արժեքնե 04

Բանկի տարածքային ներկայացվածությունը 05

Բանկը որպես հաշվետու թողարկող 06

Բանկի բաժնետերերը

Բանկի վարչությունը

Միեր Աբրահամյան

Ռուբեն Մելիքյան

Կարեն Նալբանդյան

Վարդան Գևորգյան

Ռաֆիկ Սուվարյան

Անուշիկ Խաչատրյան

Արման Ասատրյան

Սերգեյ Առաքելյան

Բանկի խորհուրդը

Վարդան Դիլանյան

Կարեն Մարգարյան

Մաքսիմ Մորոզով

Ալեքսանդր Խաչատուրյան

Մազեն Ա. Շեհայեբ

Բանկի առաքելությունը

Լինել առաջին ընտրության բանկ մեր հաճախորդների համար՝ որպես Հայաստանի լավագույն նորարար բանկ:

Բանկի տեսլականը

Դառնալ առաջատար թվային բանկ՝ ընդլայնելով մեր նորարարական, հաճախորդամետ գործունեությունը:

Բանկի արժեքները

Մենք նորարար ենք – Մեր առաջնային նպատակներից է հաճախորդներին որակյալ, արագ և առանց սահմանների բանկային ծառայությունների մատուցումը՝ բաց և նորարարական թվային հարթակի միջոցով:

Մենք թափանցիկ ենք – Մենք շարունակական ջանքեր ենք գործադրում, որպեսզի առավել թափանցիկ լինենք մեր հաճախորդների, ներդրողների, գործընկերների և բաժնետերերի հետ հարաբերություններում:

Մենք վստահելի ենք – Մենք կարևորում ենք մեր շահառուների տվյալների անվտանգ պահպանությունը՝ մեծ ռեսուրսներ ներդնելով դրանք կիբերհարձակումներից և այլ սպառնալիքներից պաշտպանելու համար:

Մենք հավատարիմ ենք – Մենք մեր հաճախորդների կողքին կլինենք կյանքի և՛ լավ, և՛ վատ պահերին՝ ստեղծելով հաճախորդամետ էկոհամակարգ նրանց պահանջմունքների շուրջ:

Մենք թիմային ենք – Մենք խրախուսում ենք մեր աշխատակիցների նորարարական մոտեցումները և համոզված ենք, որ միայն թիմային ջանքերով է հնարավոր հասնել գերազանց արդյունքների:

Բանկի տարածքային ներկայացվածությունը



ԼՈՌԻ

Վանաձորի մասնաճյուղ
73 Տիգրան Մեծի փող., Վանաձոր

ՇԻՐԱԿ

Գյումրիի մասնաճյուղ
6 Անկախության հրպ., Գյումրի

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ

«Պայազատ» մասնաճյուղ
30ա Անդրանիկի փող., Գավառ

ԱՐՄԱՎԻՐ

Էջմիածնի մասնաճյուղ
16 Մովսես Խորենացի փող., Էջմիածին

ԿՈՏԱՅՔ

Աբովյանի մասնաճյուղ
4 Օգոստոս 23 փող., Աբովյան

ԵՐԵՎԱՆ

Դավթաշենի մասնաճյուղ - 11/91 4-րդ թաղ., Դավթաշեն
«Արաբկիր» մասնաճյուղ - 56/162 Կոմիտասի պող.
«Բաղրամյան» մասնաճյուղ - 75 Բաղրամյան պող.
«Նոր Նորք» մասնաճյուղ - 17/1 Գայի պող.
«Մալաթիա» մասնաճյուղ - 39/61 Ռաֆֆու փող.
«Էրեբունի» մասնաճյուղ – 7/60 Էրեբունու փող.
«Վարդանանց» մասնաճյուղ – 13 Վարդանանց փող.
«Տիգրան Մեծ» մասնաճյուղ - 4 Տիգրան Մեծի պող.

Բանկը որպես հաշվետու թողարկող

Բանկն իր պատմության ընթացքում առաջին անգամ թողարկել և տեղաբաշխել է պարտատոմսեր 2016 թվականին: Բանկի կողմից պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման նպատակն է միջոցների ներգրավումը, որոնք ուղղվում են Բանկի հիմնական գործունեության ֆինանսավորմանը:

Պարտատոմսերի թողարկումը նաև նպատակ է հետապնդում նվազեցնել վարկավորմանն ուղղվող ռեսուրսի գինը և հետևաբար նաև Բանկի կողմից առաջարկվող վարկային պրոդուկտների տոկոսադրույքները՝ հնարավորություն տալով Բանկին ապահովել պասիվների կառավարման արդյունավետության բարձրացում և դիվերսիֆիկացում:

Թողարկված պարտատոմսեր (մլրդ ՀՀ դրամ)



IDBank-ի 2019 թվականի առաջին թողարկման պարտատոմսերը ցուցակվել են ֆոնդային բորսայում

IDBank-ի 2019 թվականի առաջին թողարկման պարտատոմսերը ցուցակվել են «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում՝ ընդգրկվելով պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում: Պարտատոմսերով թույլատրված է հասցեական և ռեպո գործարքների իրականացումը:

Պարտատոմսերը թողարկվել են 2019թ.-ի փետրվարի 20-ին՝ 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, շրջանառության ժամկետը 2 տարի 6 ամիս է, արժեկտրոնի տոկոսադրույքը՝ 5,25%, որը կվճարվի եռամսյա պարբերականությամբ:

Պարտատոմսերում ներդրողների ռիսկերի գծով էական փոփոխություններ չեն արձանագրվել

Պարտատոմս ձեռք բերելիս ներդրողը կրում է հետևյալ ռիսկերը՝

- ✓ Շուկայական ռիսկ (Տոկոսադրույքի ռիսկ, Արտարժութային ռիսկ),
- ✓ Պարտատոմսերի իրացվելիության ռիսկ,
- ✓ Գնաճի ռիսկ

30/06/2019թ դրությամբ շուկայում ներդրողի ռիսկերի գծով էական փոփոխություններ չեն արձանագրվել:

2

Ֆինանսական հաշվետվություն

Ֆինանսական արդյունքների ամփոփում 08

Ֆինանսական հաշվետվություններ 12

Ֆինանսական արդյունքների ամփոփում

2019-ի առաջին կիսամյակի արդյունքներով IDBank-ն արձանագրել է 1.53 մլրդ ՀՀ դրամ զուտ շահույթ, ինչպես նաև մի շարք ֆինանսական ցուցանիշների աճ:

2019թ. 1-ին կիսամյակի ցուցանիշների աճ՝ տարեվերջի համեմատությամբ (%)



2019թ. 1-ին կիսամյակի տնտեսական նորմատիվներ և գործակիցներ (%)



Զուտ տոկոսային եկամուտ (մլն ՀՀ դրամ)



*ROE և ROA գործակիցները տարեկանացված են:

Ընդամենը ակտիվներ (մլրդ ՀՀ դրամ)



Ընդամենը պարտավորություններ (մլրդ ՀՀ դրամ)



Ընդամենը կապիտալ (մլրդ ՀՀ դրամ)



Չբաշխված շահույթ (մլրդ ՀՀ դրամ)



Վարկային պորտֆել

Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (ամորտիզացված արժեքով հաշվառվող) , մլն ՀՀ դրամ



Հաճախորդներին տրված վարկերի վերլուծությունը ըստ տնտեսության ճյուղերի| 2019 1 կիս., %

Կորպորատիվ հաճախորդներին տրված վարկեր
41 մլրդ ՀՀ դրամ

Առևտուր և ֆինանսներ
74.1%

Էներգետիկա
1.8%

Արդյունաբերություն
4.2%

Այլ
19.9%



Անհատներին տրված վարկեր
37.4 մլրդ ՀՀ դրամ

Սպառողական վարկեր
49.1%

Ոսկու գրավով վարկեր
17.4%

Հիպոթեքային վարկեր
25.4%

Էքսպրես վարկեր
7.7%

Այլ
0.4%

Բանկի դիրքը ՀՀ բանկային համակարգում

Ընդամենը ակտիվներ



Աղբյուր՝ Arminfo, IDBank

Բանկը ակտիվների ծավալով 15-րդ դիրքում է՝ 2.6 % մասնաբաժնով:

Ընդամենը պարտավորություններ



Աղբյուր՝ Arminfo, IDBank

Բանկը պարտավորությունների ծավալով 15-րդ դիրքում է՝ 2.2 % մասնաբաժնով:

Ընդամենը կապիտալ



Աղբյուր՝ Arminfo, IDBank

Բանկը կապիտալի ծավալով 8-րդ դիրքում է՝ 5.3 % մասնաբաժնով:

Ֆինանսական հաշվետվություններ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ֆինանսական արդյունքների մասին
«30» Հունիսի 2019 թ.

«ԱԴԻ Բանկ» ՓԲԸ ՀՀ, Երևան, Վարդանանց փող. 13
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	01/04/2019 - 30/06/2019	01/01/2019 - 30/06/2019	01/04/2018 - 30/06/2018	01/01/2018 - 30/06/2018
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	2,983,170	5,768,438	2,916,099	5,778,314
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	3	(1,099,983)	(2,141,274)	(1,084,853)	(2,261,276)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		**1,883,187**	**3,627,164**	**1,831,246**	**3,517,038**
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ	4	207,836	366,167	132,141	508,531
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսեր	4	(93,217)	(151,265)	(44,443)	(151,076)
Ստացված զուտ միջնորդավճարներ և այլ վճարներ		**114,619**	**214,902**	**87,698**	**357,455**
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	5	176,635	292,358	827,587	1,696,002
Այլ գործառնական եկամուտներ	6	154,777	291,094	485,775	655,643
Գործառնական եկամուտներ		**2,329,218**	**4,425,518**	**3,232,309**	**6,226,138**
Կորուստներ արժեզրկումից	7	89,731	184,775	(50,069)	16,072
Ընդհանուր վարչական ծախսեր	8	(1,217,312)	(2,350,189)	(1,523,448)	(2,492,182)
Այլ գործառնական ծախսեր	9	(153,244)	(279,052)	(170,195)	(323,115)
Շահույթը/ (վնասը) մինչև հարկումը		**1,048,393**	**1,981,052**	**1,488,597**	**3,428,913**
Շահութահարկի գծով (ծախս)/հիդհնահատուցում	10	(249,795)	(448,302)	(484,427)	(887,823)
Ժամանակաշրջանի զուտ շահույթ		**798,598**	**1,532,750**	**1,004,170**	**2,541,090**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		**116,461**	**189,645**	**(728,896)**	**(1,268,510)**
Ֆինանսական արդյունքներ փոխանցված զուտ օգուտ (վնաս)		(794)	5,496	(787,509)	(1,480,302)
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակած զուտ օգուտ (վնաս)		144,790	229,897	(123,610)	(105,335)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերվող բաղկացուցիչ մասի շահութահարկ		(27,535)	(45,748)	182,223	317,127
Համապարփակ ֆինանսական արդյունք		**915,059**	**1,722,395**	***275,274***	***1,272,580***
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	11	1.2	2.3	1.4	3.7
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ	11	1.2	2.3	1.4	3.7

Հաշվետվության վավերացման ամսաթիվը *12/07/19*

Վարչության նախագահ _____ Մ. Աբրահամյան

Գլխավոր հաշվապահ _____ Ն. Գրիգորյան

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական վիճակի մասին

«30» Հունիսի 2019 թ.

«ԱԿԲԻ Բանկ» ՓԲԸ ՀՀ, Երևան, Կարապետյանց փող 13

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Մանրամասն գրություններ	30/06/19	31/12/2018թ. (Ստուգված)
Ակտիվներ			
Կանխիկ դրամական միջոցներ		4,656,567	2,602,168
ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ	12	8,706,183	8,735,667
Պահանջներ բանկերի նկատմամբ	13	10,143,343	11,333,544
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	15	3,725,552	3,429,813
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	16	72,470,519	62,895,242
Իրական արժեքով՝ այլ համապարիսկ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	17	5,678,416	4,728,200
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	18	23,200,763	20,723,726
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	19	7,081,581	5,061,844
Բռնագանձված ակտիվներ	20	1,267,698	1,098,325
Այլ ակտիվներ	21	1,765,075	1,465,427
Ընդամենը՝ ակտիվներ		**138,695,697**	**122,073,956**
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	22	16,213,537	8,258,544
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	23	67,971,867	59,319,751
Այլ փոխառություններ	24	1,798,174	1,833,882
Անհետաձգված ֆինանսական պարտավորություններ	14	5,259	1,337
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	25	7,329,397	10,823,040
Հետաձգված հարկային պարտավորություններ	26	1,107,027	617,324
Այլ պարտավորություններ	27	2,283,919	955,956
Ընդամենը՝ պարտավորություններ		96,709,180	81,809,834
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	28	33,971,850	33,971,850
Էմիսիոն եկամուտ		5,014,099	5,014,099
Պահուստներ՝		515,190	325,545
Գլխավոր պահուստ		107,760	107,760
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ		110,808	110,808
Իրական արժեքով չափվող ֆին. ակտիվների վերագնահատման պահուստ		296,622	106,977
Չբաշխված շահույթ (վնաս)		2,485,378	952,628
Ընդամենը՝ կապիտալ		41,986,517	40,264,122
Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		***138,695,697***	***122,073,956***

Հաշվետվության վավերացման ամսաթիվը *12/07/19*

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դրամական միջոցների հոսքերի մասին

«30» Հունիսի 2019 թ

«ԱՄԴԻ Բանկ» ՓԲԸ 22, ք. Երևան, Վարդանանց փող. 13

(ընտրանքի տեսակետից և ստանդարտ գծագրից)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Նախորդ ժամանակաշրջան 01/01/18-ից 30/06/18թ.	Հաշվետու ժամանակաշրջան 01/01/19-ից 30/06/19թ.
1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	**2,341,482**	**1,360,099**
Ստացված տոկոսներ	5,932,689	4,848,005
Վճարված տոկոսներ	(2,903,881)	(2,377,699)
Ստացված կոմիսիոն գումարներ	508,531	366,167
Վճարված կոմիսիոն գումարներ	(151,076)	(151,265)
Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից օգուտ/(վնաս)	281,555	264,986
Լսելիությամբ դուրս գրված ակտիվների վերադարձ	885,026	886,594
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(1,461,726)	(1,705,395)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր	(749,636)	(771,294)
Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից	**(13,141,107)**	**6,275,091**
Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում)	(2,510,586)	(10,982,304)
այդ թվում՝ վարկերի և փոխառությունների նվազում/ (ավելացում)	(1,746,848)	(9,767,501)
Բրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով տափմող արժեթղթերի նվազում (ավելացում)	-	(960,920)
այլ գործառնական ակտիվների նվազում/(ավելացում)	(763,738)	(253,883)
Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում)	(10,630,521)	17,257,395
այդ թվում՝ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ավելացում/(նվազում)	(10,798,478)	9,945,833
այլ գործառնական պարտավորությունների ավելացում/(նվազում)	167,957	7,311,562
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը	**(10,799,625)**	**7,635,190**
Վճարված շահութահարկ	(30,000)	(33,000)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից	**(10,829,625)**	**7,602,190**
2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից	x	x
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներում ներդրումների նվազում (ավելացում)	3,709,799	(2,301,614)
Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում)	(4,225)	(60,544)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների (ձեռքբերում) օտարում	(260,926)	(507,919)
Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից	**3,444,648**	**(2,870,077)**
3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից	x	x
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)	(335,747)	-
Բանկերից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)	2,849,790	1,000,000
Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում)	(43,185)	-
Բանկի կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)	-	(3,277,858)
Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից	2,470,858	(2,277,858)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(59,320)	(94,641)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	**(4,973,439)**	**2,359,614**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	17,229,253	11,264,389
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	12,255,814	13,624,003

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 12/07/19

Գլխավոր հաշվապահ Ս.Ավետիսյան

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին

«30» Հունիսի 2019 թ

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փող 13

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄ	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գծային պահուստ	Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ	Իրական արժեքով այլ համ ֆին արդ միջ չամիվող ֆին ակտիվների վերագ պահուստ	Չբաշխված շահույթ (վնաս)	Ընդամենը կապիտալ
Նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական)							
Մնացորդը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ (աուդիտված)	33,971,850	5,014,099	107,760	156,499	3,342,351	1,792,958	**44,385,517**
Տարվա շահույթ (վնաս)	-	-	-	-	-	2,541,090	**2,541,090**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	*(1,268,510)*	-	*(1,268,510)*
Ֆինանսական արդյունքներ փոխանցված զուտ օգուտ (վնաս)	-	-	-	-	(1,480,302)	-	*(1,480,302)*
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակած զուտ օգուտ (վնաս)	-	-	-	-	(105,335)	-	*(105,335)*
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերվող բաղադրիչի մասի շահութահարկ	-	-	-	-	317,127	-	*317,127*
ՀՀՄՍ-ի փոփոխության հետևանքով այլ շարժեր	-	-	-	-	*(1,963,078)*	*(796,484)*	*(2,759,562)*
Մնացորդը 2018թ. Հունիսի 30-ի դրությամբ (աուդիտված)	***33,971,850***	***5,014,099***	***107,760***	***156,499***	***110,763***	***3,537,564***	***42,898,535***

Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական)							
Մնացորդը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ *(սուդիտված)*	33,971,850	5,014,099	107,760	110,808	106,977	952,628	***40,264,122***
Տարվա շահույթ (վնաս)	-	-	-	-	-	1,532,750	***1,532,750***
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	**189,645**	-	***189,645***
Ֆինանսական արդյունքներ փոխանցված զուտ *օգուտ (վնաս)*	-	-	-	-	5,496	-	***5,496***
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակած զուտ *օգուտ (վնաս)*	-	-	-	-	229,897	-	***229,897***
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերվող բաղադրիչի մասի շահութահարկ	-	-	-	-	(45,748)	-	***(45,748)***
Մնացորդը 2019թ. հունիսի 30-ի դրությամբ (չսուդիտված)	**33,971,850**	**5,014,099**	**107,760**	**110,808**	**296,622**	**2,485,378**	***41,986,517***

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 12/07/19

Վարչության նախագահ Մ.Աբրահամյան

Գլխավոր հաշվապահ Ա.Մարտիրոսյան

Աղբյուր՝ Arminfo, IDBank

3

Ռազմավարական հաշվետվություն

Ռազմավարական առաջնահերթություններ 17

Իրականացված ծրագրեր 18

Ռազմավարական առաջնահերթություններ

Սպասարկման որակի ապահովում.
հաճախորդամետ էկոհամակարգի ստեղծում

Ծառայությունների մատուցման որակի բարելավում՝ հիմնված իրական վերլուծությունների և հաճախորդների փորձառության զարգացման վրա

Թվայնացում.
թվային տրանսֆորմացիայի գործընթացի արագացում

Ներքին գործընթացների ավտոմատացում՝ հաճախորդներին ակնթարթային թվային լուծումներ տրամադրելու և ծախսերի, աշխատատարության կրճատման նպատակով

Կիբեր անվտանգություն.
կիբեր պաշտպանության համակարգերի զարգացում՝ միջազգային բարձր ստանդարտներին համապատասխանելու համար

Ներդրումներ անվտանգության համակարգերի զարգացման նպատակով

Թիմային աշխատանք.
համագործակցության գաղափարախոսության զարգացում

Աշխատակիցների որակավորման և ճկունության բարձրացում՝ Բանկի թվային տրանսֆորմացիայի իրականացմանը և գործունեության արդյունավետության բարձրացմանը նպաստելու նպատակով

Ծախսերի նվազեցում և եկամտի նոր աղբյուրների ստեղծում.
ամուր ֆինանսական հիմքի ստեղծում արտաքին միջավայրի ազդեցությունները մեղմելու նպատակով

Ստեղծել ծախսերի արդյունավետ կառավարման համակարգ, զարգացնել թվային հարթակը

2019թ. 1-ին կիսամյակում իրականացված ծրագրեր

Բանկը, հավատարիմ մնալով իր՝ Հայաստանի լավագույն թվային բանկ դառնալու տեսլականին, շարունակում է ռազմավարական ուղղությունների զարգացումը՝ նորարարական նախագծերի իրականացման միջոցով:
2019 թվականի առաջին կիսամյակում արդեն իրականացվել են մի շարք ռազմավարական նշանակության ծրագրեր:

Նոր քարտ՝ բազմաթիվ առավելություններով

Բանկը Idram-ի հետ համագործակցության շրջանակում թողարկել է Idram Rocket Visa քարտը: Idram Rocket Visa քարտը բոլորովին անվճար հնարավոր է պատվիրել առցանց IDBank-ի նոր Online Banking համակարգից (IDBanking.am), Idram-ի վեբկայքից, Idram բջջային հավելվածից, ինչպես նաեւ IDBank-ի մասնաճյուղերից: Քարտը, ցանկության դեպքում, կառաքվի հաճախորդի նախընտրած հասցեով: Idram Rocket Visa քարտի դրական մնացորդի վրա հաճախորդը ստանում է տարեկան 4,5% տոկոսագումար, իսկ քարտով կատարած ցանկացած անկանխիկ գնման դեպքում՝ cashback:

IDBank-ը Առևտրի միջազգային պալատի անդամ

IDBank-ը՝ ՀՀ բանկային համակարգում առաջինը պաշտոնապես անդամակցեց Առևտրի միջազգային պալատին (ԱՄՊ) / International Chamber of Commerce (ICC)՝ դառնալով ICC Հայաստանի ազգային կոմիտեի (ICC National Committee Armenia – ICC NCA) անդամ:
Առևտրի միջազգային պալատին անդամակցությունը հնարավորություն է տալիս IDBank-ի փորձագետներին ներգրավվել ICC Բանկային հանձնաժողովի (ICC Banking Commission) կազմում, մասնակցել ICC միջազգային աշխատանքային խմբերի գործունեությանը, որոնք ձևավորում են բանկային նորարարական լավագույն գործիքների և լուծումների վերաբերյալ առաջարկներ և խորհրդատվություն:

Էջմիածնի մասնաճյուղի վերաբացում

Էջմիածնի մասնաճյուղը հերթականն է Բանկի նորարար, ժամանակակից ոճով մասնաճյուղերից, որտեղ ստեղծված են բոլոր պայմանները հաճախորդներին բարձրակարգ սպասարկում ապահովելու համար, իսկ նորարար միջավայրն ու տեխնոլոգիական լուծումներն էլ ավելի հաճելի կդարձնեն այցելությունը Բանկ:

2019թ. 1-ին կիսամյակում իրականացված ծրագրեր

«Կառուցի՛ր կարիերադ IDBank-ի հետ» ուսումնական ծրագիր

Բանկը, կարևորելով երիտասարդ սերնդի համար նոր հնարավորություն ստեղծելը, որոշեց լուծել այս խնդիրը գոնե մի խումբ ուսանողների համար և հնարավորություն տալ նրանց բանկի միջոցներով մասնակցել դասընթացների, իսկ այնուհետև՝ նաև աշխատել բանկում:
Քանի որ Բանկի ռազմավարական նպատակներից մեկը սպասարկման որակի բարելավումն է և հաճախորդներին անհատական մոտեցումների տրամադրումը, ընտրվել են այնպիսի ուսանողներ, ովքեր պատրաստ են կարիերան սկսել հենց այդ կարևորագույն օղակից:

IDBank-ի անվան՝ 1 մլն դրամի չափով կրթաթոշակ ուսանողներին

2019 թվականի 1-ին կիսամյակում IDBank-ը հայտարարել է անվանական կրթաթոշակի ծրագրի մեկնարկի մասին: Կարևորելով կրթությունը և երիտասարդ սերնդի շարունակական զարգացումը՝ Բանկը հնարավորություն է ընձեռում ՀՀ պետական բուհերում գերազանցությամբ սովորող ուսանողներին շարունակել կրթությունը մագիստրատուրայում IDBank-ի անվան կրթաթոշակով:

«Իմ քայլը հանուն Լոռու մարզի»

Բանկը մասնակցել է «Իմ քայլը հանուն Լոռու մարզի» ներդրումային բիզնես-ֆորումին, որի նպատակը Լոռու մարզի զարգացման հեռանկարների քննարկումն էր, ներդրումային միջավայրի բարելավումն ու խնդիրների լուծման ճանապարհային քարտեզ մշակելը:
Բանկը կարևորում է գործարար միջավայրում փորձի փոխանակումը, ներդրումային ծրագրերի հեղինակների հետ շփումներն ու ակտիվ քննարկումները՝ շուկայում առկա պահանջարկն ավելի լավ հասկանալու և հաճախորդներին հետաքրքրող նորանոր առաջարկներով հանդես գալու համար:

4

Ռիսկերի կառավարում

Հիմնական տնտեսական նորմատիվներ 21

Ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումներ 22

Հիմնական տնտեսական նորմատիվներ

Բանկի ֆինանսական կայունությունը բնութագրող երկու ցուցանիշները՝ կապիտալի համարժեքությունը և իրացվելիությունը, գտնվում են պահանջվող նվազագույն մեծությունից և բանկային համակարգի համապատասխան ցուցանիշներից բարձր մակարդակում: 2018-ի տարեվերջին կապիտալի համարժեքության նորմատիվը կազմել է 32%[1], իսկ ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվները՝ համապատասխանաբար 27.2% և 144.6%[2]:

Կապիտալի համարժեքության նորմատիվ Ն1(2)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, IDBank

Ընդհանուր իրացվելիության նորմատիվ Ն2(1)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, IDBank

Ընթացիկ իրացվելիության նորմատիվ Ն2(2)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, IDBank

1. Պահանջվող նվազագույն մեծությունը 12% է:
2. Պահանջվող նվազագույն մեծությունները համապատասխանաբար15% և 60% են:

Ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումներ

Վարկային ռիսկի կառավարում

Վարկավորման գործընթացում առաջացող ռիսկերի զսպման նպատակով Բանկը վարկավորման գործընթացի հիմքում դնում է հետևյալ սկզբունքները՝

- վարկի նպատակայնության և մարման աղբյուրների առկայությունը
- գրավի առարկան և գրավի առարկայի զգայունությունը տնտեսական և շուկայական զարգացումների նկատմամբ, ինչպես նաև վարկ/գրավ հարաբերակցության սահմանաչափերին համապատասխանությունը
- պոտենցիալ վարկառուի գործունեության տնտեսական ոլորտի առկա իրավիճակը, այդ ոլորտում դիմորդի գործունեություն ծավալելու ուղղությամբ փորձառությունը, ոլորտում նրա դիրքը, ոլորտի մրցակցության աստիճանը և մրցակցությունը
- պոտենցիալ վարկառուի գործող բիզնեսի, զուտ համախառն եկամտի կայուն մակարդակի և/կամ դրական վարկային պատմության առկայությունը
- պոտենցիալ վարկառուի ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշների սահմանաչափերի սահմանումը

Վարկային ռիսկի կառավարումն իրականացվում է նաև վարկային ռիսկի ախորժակի սահմանմամբ և Բանկի ընդհանուր պորտֆելի ռիսկայնության գնահատմամբ:

Բանկը գտնվում է վարկային ռիսկերի կառավարման շարունակական զարգացման և արդիական մեթոդների ներդրման գործընթացում, մասնավորապես՝ Բանկում ներդրվում են վարկային ռիսկի կառավարման նոր արդիական մոտեցումներ և հաշվողական մոդելներ, մանրածախ վարկավորման գործընթացի սքորինգային համակարգեր, հաճախորդների ռիսկայնության մակարդակների վրա հիմնված վարկերի գնագոյացման համակարգ (Advanced Risk-Based Pricing (RBP) model):

Իրացվելիության ռիսկի կառավարում

Իրացվելիության ռիսկի գնահատման և սահմանափակման համար Բանկը օրական կտրվածքով հաշվարկվում է իրացվելիության հիմնական տնտեսական նորմատիվները, որոնց հիման վրա կայացվում են համապատասխան որոշումներ: Բանկը իրացվելիության ռիսկի կառավարումն իրականացնում է հետևյալ հիմնական մոդելների միջոցով՝

- Իրացվելիության ճեղքվածքի (GAP) մոդել,
- Իրացվելիության նորմատիվների վերլուծություն,
- Սթրես թեստավորում:

Տոկոսադրույքի ռիսկի կառավարում

Տոկոսադրույքի ռիսկի գնահատման և սահմանափակման համար Բանկը, հաշվի առնելով շուկայում առկա տոկոսադրույքները, կատարում է տոկոսադրույքների գնահատում և համապատասխանեցում շուկայում գործող ցուցանիշներին, մշտապես վերահսկում է տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների միջև առկա ժամկետայնության ժեղքվածքը, իսկ շուկայական տոկոսադրույքների փոփոխության դեպքում արագ արձագանքելով, նվազագույնի է հասցվում փոփոխության արդյունքում Բանկի համար հնարավոր կորուստների ռիսկը:

Արտարժութային ռիսկի կառավարում

Արտարժութային ռիսկի կառավարման հիմնական սկզբունքն է նպաստել Բանկի արտարժութային բաց դիրքերի արդյունավետ կառավարման գործընթացին՝ միաժամանակ հետևելով սահմանված արտարժութային ռիսկի կառավարման նորմատիվային և ուղենիշային ցուցանիշների սահմանաչափերի պահպանմանը:

Գործառնական ռիսկի կառավարում

Գործառնական ռիսկերի հայտնաբերման և դասակարգման համար Բանկն իրականացնում է ռիսկերի ինքնագնահատում, տեղի ունեցած գործառնական պատահարների վերաբերյալ տվյալների բազայի հավաքագրում և խաբեության ռիսկի հայտնաբերում («Կատարված, փոփոխված և հեռացված գործարքների», FPD/SPD/TPD տվյալների մասին հաշվետվությունների և Բանկում իրականացված գործրաքների մշտադիտարկման միջոցով):

Մինչ նոր պրոդուկտների, նոր և վերանայվող ներքին իրավական ակտերի, բանկային գործառնությունների, գործողությունների և համակարգերի ներդրումը, Բանկը ԳՌ տեսանկյունից պոտենցիալ ռիսկերի բացահայտման նպատակով, ապահովում է վերջիններիս ուսումնասիրությունը և սահմանում է գործընթացների քայլային հաջորդականությունների ռիսկի հակվածության աստիճանները:

Երկրի ռիսկի կառավարում

Այլ երկրներում գրանցված և/կամ փաստացի գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ ակտիվային գործարքների կնքման, թղթակցային հաշիվների բացման և հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների ստանձնման դեպքերում, տվյալ երկրի հետ առաջին անգամ գործարքի կնքման պահին, ինչպես նաև հետագայում Բանկը գնահատում է տվյալ կազմակերպության երկրի ռիսկը՝ հիմք ընդունելով միջազգային ռեյտինգային ընկերություններից մեկի (Moody's, Standard&Poor's, Fitch) կողմից տվյալ երկրին շնորհված վարկանիշը և ներքին ընթացակարգով սահմանված սահմանաչափերը:

Համբավի ռիսկի կառավարում

Կառավարման նպատակն է բացահայտել «ԱյԴի Բանկ» ՓԲԸ բնականոն գործունեության ընթացքում բանկի վերաբերյալ հանրության բացասական կարծիքի առաջացման ուղղությունները և սահմանել Բանկի կողմից համբավի ռիսկի կանխարգելմանը/նվազեցմանն ուղղված միջոցառումների հիմնական ուղղությունները

Ռազմավարական ռիսկի կառավարում

Ռազմավարական ռիսկի կառավարման հիմնական նպատակն է անհամապատասխան Բիզնես մոդելի որդեգրման արդյունքում առաջացող կամ հնարավոր կորուստները նվազագույնի հասցնելը: Ռազմավարական ռիսկի առաջացման հնարավորությունը բացահայտելու և գնահատելու նպատակով Բանկը ներդնում է չափանիշներ, որոնց կարգավիճակի և մեծության փոփոխությունը նշանակում է Բանկի գործունեության որոշակի ուղղության բնույթի փոփոխություն, և հետևաբար, որակապես այլ բնույթի ռազմավարական ռիսկ կրելու հնարավորություն:

Թվարկված ռիսկերի գծով Բանկում գործող նորմատիվային դաշտը կարգավորվում է IDBank-ի ներքին և ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաստատված համապատասխան իրավական ակտերով:

30/06/2019թ դրությամբ նորմատիվների գծով խախտումներ առկա չեն:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույնով հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝

1. IDBank-ի՝ 2019 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությունում ներառված տեղեկությունները ճշգրիտ են և լիարժեք, բոլոր էական առումներով համապատասխանում են իրավական ակտերով սահմանված պահանջներին:

2. 2019 թվականի երկրորդ եռամսյակի աուդիտ չանցած ֆինանսական հաշվետվությունները կազմված են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն և, բոլոր էական առումներով, ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը 2019 թվականի հունիսի 30-ի դրությամբ:

Միեր Աբրահամյան	Վարչության նախագահ	
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)
Ռուբեն Մելիքյան	Ֆինանսական տնօրեն, Վարչության նախագահի տեղակալ	
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)
Կարեն Նալբանդյան	Բիզնեսի զարգացման տնօրեն, Վարչության անդամ	
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)
Վարդան Գևորգյան	Մանրածախ բիզնեսի գծով տնօրեն, Վարչության անդամ	
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)
Ռաֆիկ Սուվարյան	Ռիսկերի կառավարման գծով տնօրեն, Վարչության անդամ	
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)
Անուշիկ Խաչատրյան	Գլխավոր հաշվապահ, Վարչության անդամ	
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)
Արման Ասատրյան	Գործառնական տնօրեն, Վարչության անդամ	
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)
Սերգեյ Առաքելյան	Թվային բանկինգի տնօրեն, Վարչության անդամ	
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)

RA, Yerevan, 0010, Vardanants 13
Phone: (+374 10) 59 33 33,
E-mail: info@idbank.am
URL: www.idbank.am